

կապը հայ գերիների նկատմամբ նման վերաբերմունք դրսևորելու ու դաժանություններ գործելու հետ: Չեկույցի շրջանակում անդրադարձ է կատարվել ոչ միայն Ադրբեջանի զինվորականների, իրավապահ մարմինների աշխատակիցների և այլ պետական ծառայողների գործողություններին, այլ նաև գերեվարման արդյունքում ադրբեջանական բժշկական հաստատություններում բուժում ստացող հայ ռազմագերիների նկատմամբ բուժաշխատողների կողմից ցուցաբերված վերաբերմունքին և դրանում առկա անընդունելի դեպքերին:

6. Սույն զեկույցի կազմման նպատակներից մեկն է հավաքագրել, վերլուծել և ներկայացնել Ադրբեջանում հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգումներ և դաժան վերաբերմունք դրսևորելու համատարած բնույթը, փաստարկված հիմնավորել Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերի համատարած և կոպտագույն խախտումներն ու պատերազմական հանցագործությունները, դրանցում ադրբեջանական իշխանությունների հայաստյաց քաղաքականությունը խրախուսելու նշանակալի դերը և ազդեցությունը, ինչպես նաև միջազգային հանրության և իրավասու կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել դեռևս Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների իրավունքների ապահովման ու նրանց հայրենադարձման նպատակով լրացուցիչ ջանքեր գործադրելու անհրաժեշտության վրա:

7. Չեկույցով Պաշտպանի հաստատությունը նաև նպատակ ունի ներկայացնել ստուգված ու արժանահավատ տեղեկություններ, որոնք հիմք կհանդիսանան հայ ռազմագերիների նկատմամբ հանցագործողություններ իրականացրած ադրբեջանական իշխանության տարբեր մարմինների պատասխանատուներին ու դերակատարներին, ի թիվս ներպետական դատավարությունների, նաև միջազգային տրիբունալներում պատասխանատվության կանչելու համար:

8. Պաշտպանի աշխատակազմը առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում հարցազրույցին մասնակցած բոլոր անձանց իրենց վերապրած տառապանքները հաստատության ներկայացուցիչների հետ կիսվելու քաջության համար:

## **2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **2.1 Չեկույցի կազմման մեթոդաբանությունը.**

9. Չեկույցի կազմման ընթացքում Պաշտպանի աշխատակազմն առաջնորդվել է հաստատության որդեգրած անկախության, անկողմնակալության, օբյեկտիվության ու բարեվարքության սկզբունքներով և խախտումների վերաբերյալ հետևություններն իրականացրել է անկախ ենթադրյալ մեղավորների ինքնությունից կամ ազգությունից:

10. Չեկույցի պատրաստման համար տարված բոլոր աշխատանքներում Պաշտպանի աշխատակազմը հավատարիմ է եղել հաստատության կողմից որդեգրված գոհակենտրոն մոտեցմանը՝ առաջնորդվելով «մի վնասիր» սկզբունքով:

11. Սույն զեկույցում ներկայացված տվյալները ընդգրկում են 2022թ.-ի սեպտեմբերի 13-ից 15-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից գերեվարված հայ ռազմագերիների նկատմամբ դրսևորած դաժան և անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ տվյալները՝ վերջիններիս գերեվարման պահից սկսած մինչև հոկտեմբերի 4-ը՝ նրանց հայրենադարձվելը:

12. Չեկույցում Ադրբեջանի կողմից հայ գերիների նկատմամբ խոշտանգումները և դաժան, անմարդկային վերաբերմունքը ներկայացվել է ըստ փուլերի և ադրբեջանական համապատասխան իրավասու մարմինների կողմից դրսևորված վերաբերմունքի: Այսպես՝ նախ ներկայացվում է գերեվարման և ռազմական օբյեկտ տեղափոխելու ժամանակահատվածը, այսինքն՝ այս փուլում խոսքը ադրբեջանական զինվորականների կողմից ցուցաբերվող վերաբերմունքի մասին է: Հաջորդը ադրբեջանական իրավապահ մարմնում գտնվելու փուլն է, որտեղ ներկայացվում է իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ցուցաբերված վերաբերմունքը, և վերջում՝ բանտում կամ բժշկական հիմնարկում գտնվելու փուլը, որտեղ ներկայացվում է բանտի և բժշկական հաստատության աշխատակիցների կողմից հայ ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքը:

13. Սույն զեկույցը առավելապես հիմնված է ս.թ. հոկտեմբերի 4-ին հայրենադարձված բոլոր 17 հայ ռազմագերիների հետ ՄԻՊ ներկայացուցիչների հետ ունեցած առանձնագրույցների արդյունքում ստացված տեղեկատվության վրա, որի արդյունքները, բացի սույն զեկույցից, առնաձին փաստաթղթի ձևով ամփոփվել է ՄԻՊ աշխատակազմում: Նշված առանձնագրույցների իրականացման մեթոդաբանությունը ներկայացված է ստորև՝ մեթոդաբանության 2-րդ կետով:

14. Հաշվի առնելով այն, որ զեկույցը պարունակում է հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող, դաժան վերաբերմունք, զոհված հայ զինծառայողների մարմինները անարգելու նկարագրություններ և տեսարաններ, զեկույցը ներկայացվում է փակ ձևաչափով՝ նկատի ունենալով թեմայի զգայնությունը, պատկերների և տեսանյութերի բնույթը, ինչպես նաև հայրենադարձված գերիներին ու նրանց և դեռևս 2020թ-ից ադրբեջանական գերության մեջ գտնվող անձանց ընտանիքի անդամներին կրկնազոհայնացումից պաշտպանելու համար: Նույն նպատակներից ելնելով՝ սույն զեկույցում **հայրենադարձված հայ ռազմագերիների** անհատականացնող տվյալները՝ այդ թվում անվան և ազգանվան առաջին տառերը, չեն ներկայացվում, փոխարենը՝ յուրաքանչյուրին տրվել են պայմանական անուններ:

15. Բացի ռազմագերիների հետ անցկացված հարցազրույցների տեղեկություններից, սույն զեկույցի կազմման համար օգտագործվել է նաև Պաշտպանի աշխատակազմում գերեվարված անձանց

ընտանիքի անդամների ընդունելության ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնած տեղեկությունները, ինչպես նաև տարբեր սոցիալական հարթակներում, ՉԼՄ աղբյուրներում առկա՝ հայ զինծառայողների գերեվարման և գերության մեջ գտնվելու ժամանակահատվածում արված տեսանյութերը: Բացի այս, հիմք է ընդունվել ՄԻՊ աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման այլ աշխատանքների արդյունքները, Պաշտպանին հասցեագրված անհատական դիմումներում առկա տեղեկատվությունը: Հատկապես մանրամասն մոնիթորինգի է ենթարկվել աղբյուրազանազան ՉԼՄ-ներում, սոցիալական հարթակներում, այդ թվում՝ տեղեզրամյան ալիքներում առկա տեսանյութերը, լուսանկարները, հրապարակումները և այլ տեղեկատվությունը:

16. Հայրենադարձված հայ ռազմագերիների հետ տեղի ունեցած առանձնագրույցների արդյունքերը համադրվել են միմյանց հետ, ինչպես նաև, վերջիններիս հայտնած տեղեկատվությունը համադրվել և վերլուծության է ենթարկվել առկա տեսանյութերի, լուսանկարների, հրապարակային աղբյուրներում առկա տեղեկատվության և նախորդիվ ՄԻՊ-ին հասցեագրված դիմում-բողոքներում առկա տեղեկատվության հետ: Բացի այդ, ստացված տեղեկատվությունը վերաբերելի մասով համադրվել է ՀՀ իրավասու պետական մարմիններից Պաշտպանի պահանջով ստացված տեղեկությունների հետ:

***2.2. Հայրենադարձված գերիների հետ առանձնագրույց-հարցազրույցների իրականացման մեթոդաբանություն***

17. Գերությունից վերադարձած անձանց հետ հարցազրույցների իրականացման մեթոդաբանության տեսանկյունից, նախևառաջ, կարևորվել է հարցազրույցի անցկացման վայրը և ժամանակը: Որպես կանոն, հարցազրույցներն իրականացվել են գերիների՝ Հայաստան վերադառնալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, ստացվող տեղեկատվության թարմ և հավաստի լինելն ապահովելու նպատակով: Այսպես, հայրենադարձված գերիների հետ հարցազրույցներն իրականացվել են վերջիններիս հայրենադարձության օրվան՝ սույն թվականի հոկտեմբերի 4-ի լույս 5-ի գիշերվան հաջորդող երկու օրերին՝ սույն թվականի հոկտեմբերի 6-ին և 7-ին: Ինչ վերաբերում է հարցազրույցների անցկացման վայրին՝ ապա դրանք հիմնականում իրականացվել են վերադառնալուց հետո բժշկական հետազոտությունների անցկացման վայրում՝ բժշկական հաստատություններում, կամ այնպիսի այլ վայրում, որտեղ վերջիններս հնարավորինս կաշկանդված չեն լինի ներկայացնելու գերեվարման և գերության մեջ գտնվելու վերաբերյալ տվյալները:

18. Հայրենադարձված գերիների հետ հարցազրույցներն իրականացվել են առաձին-առանձին, բացառապես ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների և գերությունից վերադարձած անձի մասնակցությամբ: Այսինքն՝ հարցազրույցը եղել է ցանկացած այլ անձի, այդ թվում

հայրենադարձված այլ ռազմագերու, տեսալսողական դիտարկումից դուրս: Հարցազրույցների ընթացքը չի տեսաձայնագրվել, Պաշտպանի ներկայացուցիչները ձեռագիր նշումներ են կատարել:

19. Հարցազրույցը սկսելուց առաջ բոլոր դեպքերում ՄԻՊ ներկայացուցիչները գերությունից վերադարձած անձանց ներկայացել են, այնուհետև ներկայացրել են ՄԻՊ մանդատը, լիազորությունները, բացատրել հաստատության աշխատանքի էությունը և գործառույթները: Միևնույն ժամանակ, գերությունից վերադարձած անձանց տեղեկացվել է իրենց հետ խոսակցության գաղտնության մասին, մանրամասն պարզաբանվել է, որ անձանց տվյալները ոչ միայն չեն բացահայտվելու հրապարակային աղբյուրներում, այլ նաև որևէ պարագայում զգայուն տեղեկատվությունը չի տրամադրվելու ներպետական քրեական հետապնդման կամ պետական կառավարման մարմիններին, ինչպես նաև այդ տեղեկատվությունը որևէ պարագայում չի կարող որևէ բացասական հետևանք առաջացնել իրենց համար:

20. ՄԻՊ աշխատակազմի աշխատակիցների կողմից հայրենադարձված անձանց ներկայացվել են այն նպատակները, որոնց համար անցկացվում է հարցազրույցը, ներկայացվել են նաև ստացված տեղեկատվության օգտագործման եղանակները և դրանց հասանելիություն ունեցող անձանց հնարավոր շրջանակը: Միևնույն ժամանակ, ՄԻՊ ներկայացուցիչների կողմից գերությունից վերադարձած անձանց պարզաբանվել է, որ գերեվարման կամ գերության մեջ գտնվելու վերաբերյալ հայցվող տեղեկատվությունը վերջիններս կարող են ինչպես ամբողջությամբ, այնպես էլ որոշակի մասով հրաժարվել ներակայացնել ՄԻՊ ներկայացուցիչներին, և որ այդ հանգամանքը ևս, որևէ բացասական ազդեցություն չի կարող ունենալ իրենց համար:

21. Նշված տեղեկատվությունը գերությունից վերադարձած անձին փոխանցելուց և այդ տեղեկատվության՝ անձի կողմից ընկալված լինելու հարցում համոզվելուց հետո, ՄԻՊ ներկայացուցիչները առաջարկել են, որպեսզի գերությունից վերադարձած անձը, եթե ցանկանում է, ազատ շարադրանքով, իր բառերով պատասխանի իրեն ուղղվող հարցերին[1]:

22. Յուրաքանչյուր անձի հետ անցկացվող հարցազրույցին ՄԻՊ աշխատակազմից մասնակցել են առնվազն 2 ներկայացուցիչ, որոնցից մեկը՝ հարցազրույցավարը, գերությունից վերադարձած անձի հետ մշտապես պահպանում է վիզուալ կոնտակտ: Այլ կերպ ասած, ՄԻՊ ներկայացուցիչներից մեկը չորս աչքի սկզբունքին համապատասխան անընդհատ շփվում է անձի հետ, վերջինիս հետ պահում տեսողական կոնտակտ, իսկ մյուս աշխատակիցը կատարում է գրառումները: ՄԻՊ ներկայացուցիչները իրենց մոտ ունենում են նախապես մշակված հարցաթերթիկը, որի շուրջ պետք է ծավալեն խոսակցությունը և դրանում նշված հարցերի վերաբերյալ ստանան տեղեկատվությունը:

23. ՄԻՊ ներկայացուցիչների կողմից իրենց հարցերը ձևակերպելիս չեն տրվել ուղղորդող բնույթի հարցեր: Այս և այլ անհրաժեշտ սկզբունքների մասին հարցազրույց անցկացնող ՄԻՊ

աշխատակազմի աշխատակիցները նախապես ունեցել են ուղղորդման (օրինատացիոն) քննարկում Պաշտպանի հետ<sup>1</sup>:

24. Հարցազրույցի ավարտին, ՄԻՊ ներկայացուցիչները գերությունից վերադարձած անձանց տրամադրել են ՄԻՊ աշխատակազմում շուրջօրյա գործող թեժ գծի 116 հեռախոսահամարը՝ հետագայում լրացուցիչ տեղեկատվություն հիշելու դեպքում հայտնելու կամ ցանկացած այլ՝ ՄԻՊ իրավասության շրջանակում գտնվող հարցով դիմելու համար:

25. Հարցազրույցների ավարտին Պաշտպանի ներկայացուցիչները հայերանադարձված անձանց ուղղորդել են նաև անվճար հոգեբանական աջակցության ծառայությունների ստացման համար, որին հայերանադարձված անձանցից որոշները տեղում դրական են արձագանքել ու ցանկություն հայտնել, իսկ ոմանք էլ հաջորդիվ՝ պաշտպանի աշխատակազմին դիմելու միջոցով:

---

<sup>1</sup> Հայրենադարձված գերիների հետ հարցազրույցների ստանդարտ հարցաշարը ներկայացվում է ստորև:

1. Ա. Ա. Հ., ծննդյան ամսաթիվ \_

2. Խնդրում եմ նշել Ձեր կարգավիճակը (ՄՈԲ կամ զինձառայող), կոչումը և գործառնաբ: Եթե քաղաքացիական անձ եք, ապա խնդրում եմ նշել Ձեր բնակության վայրը:

3. Ե՞րբ և որտեղի՞ց եք գերեվարվել:

4. Ի՞նչ պայմաններում եք գերեվարվել: Խնդրում ենք նկարագրել գերեվարմանը նախորդող իրադարձությունները: Ունեցե՞լ եք վնասվածք գերեվարման պահին: Տրամադրվել է արդյոք բուժօգնություն:

5. Ու՞մ հետ միասին եք գերեվարվել: Խնդրում ենք նշել հնարավոր բոլոր անհատականացնող տվյալները:

6. Ու՞ր եք տեղափոխվել գերեվարվելուց հետո:

7. Ո՞վ է գերեվարված անձանցից Ձեր հետ միասին պահվել նույն վայրում: Խնդրում ենք նշել հնարավոր բոլոր անհատականացնող տվյալները:

8. Ի՞նչ պայմաններում եք պահվել գերեվարման ընթացքում: Խնդրում ենք հնարավորինս մանրամասն նկարագրել Ձեր նկատմամբ վերաբերմունքը:

9. Տրամադրվել է Ձեզ հնարավորություն կապ հաստատել ընտանիքի անդամների հետ, եթե այո, ապա՝ ե՞րբ և ի՞նչ հաճախականությամբ:

10. Ձեր, Ձեր ներկայությամբ կամ Ձեր տեղեկացմամբ այլ անձի նկատմամբ արդյոք գործադրվել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն: Տրամադրվել է արդյոք բուժօգնություն:

11. Ի՞նչ գործողություններ են Ձեզ ստիպել կատարել: Ի՞նչ փաստաթղթեր են Ձեզ պարտադրվել ստորագրել: Պարտադրել են արդյոք տեսանկարահանվել և տրամադրել կոնկրետ տեղեկություն:

12. Ձեզ այցելե՞լ է Կարմիր խաչը կամ այլ, ոչ ադրբեջանական մարմին: Բժշկի՞ հետ միասին:

13. Բժշկի հետագոտություն անցե՞լ եք: Ի՞նչ հաճախականությամբ:

14. Լրացուցի՞չ ի՞նչ տեղեկություններ կցանկանաք հայտնել ՄԻՊ-ին: